

## ԼԵՎՈՆ ՇԱՆՔԻ ԵԱՄԱԿԵՆՐԸ ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Ականավոր մանկավարժ, հասարակական գործիչ, պատմաբան, ազգագրագետ Ստ. Լիսիցյանը դեռ Գևորգյան ճեմարանից եղել է ապագա մեծ գրողի տաղանդի խրախուսողը, այնուհետև՝ ուսանող Ծանթին Գյուրջյանի հովանավորություն կազմակերպողը, վերջապես՝ կյանքում նրա մտերիմ ընկերը, գործընկերն ու բարեկամը: Այստեղից էլ Լիսիցյանին ուղիւսած նամակների բովանդակության հարստությունը՝ այնքան տարաբնույթ կենսական ցուրտով՝ գրողի անհատականությունը, կյանքն ու գործը բնութագրող:

«Բանքերի» ընթերցողներին ներկայացվող նամակների այս՝ խումբը գրվել է 1913-ին՝ Լևոն Ծանթի գրական ճանաչման աստեղային թվականին: Հանգամանք, որն արդեն կանխորոշում է դրանց բուն արժեքը, թեև արծարծվող մյուս հարցերը ևս, մասնավորապես մայրենի լեզվի «Լուսաբեր» դասագրքերը արևմտահայերենի փոխադրելու և տարածելու հարցերը, մեծապես արժեքավոր են: Դրանք նույնպես ճշգրտում, հարստացնում ու ընդարձակում են գրողի գիտական կենսագրությունը, ընթերցողին հաղորդակցում նրա ներքին մարդուն, նպաստում ստեղծագործական առանցքային խնդիրների պարզաբանմանը:

Ծանթի ստեղծագործությունը հետազոտողին անպայման կհետաքրքրի այն, թե նա ինչպե՞ս է արձագանքել իր երկի գտած հաջողությանը, ինչպե՞ս է հեռվից ընդունել, հասկացել ու գնահատել այդ ամենը, և բուռն իրադարձությունները ի՞նչ ազդեցություն են գործել, նրա գրողական ծրագրերի վրա:

Պարզվում է՝ ընկերոջ ավետաբեր հեռագրից առաջ Ծանթն արդեն լրագրերից գիտե «Հին աստվածների» գտած ընդունելության մասին և ահա տեղեկանում է նաև, որ «գրական դատ» է կայացվել, ու հետաքրքրվում հանված վճիռով: Այս պահից մենք հաղորդակցվում ենք գրողի անհանգիստ աշխարհին և հետևում այնտեղ կատարվող տեղաշարժերին:

Նույն նամակում դժվար չէ տեսնել «Հին աստվածների» հաջողությանը պայմանավորված ոգևորությունը, երբ գրողը ցանկություն է հայտնում «առանձին-առանձին կամ հատորով մը» հրատարակել ամսագրերի էջերում մնացած «նախորդ դրամաները»՝ «Եսի մարտի», «Ուրիշի համար», «Մամբուն վրա», ինչպես և մամուլում տպված վերջին գործը՝ «Կիճը» վիպակը:

Մի մանրուք, որ նույնպես զուրկ չէ հետաքրքրությունից: Գրողը երկար չի սպասում ընկերոջ խոստմանը՝ մամուլում երևացած ցյուրերը հավաքելու և նամակով Պոլիս ուղարկելու և անհանգստությունից մղված՝ նոր նամակ է հղում Թիֆլիս՝ իհարկե պատշաճ լուծություն պահպանելով «Հին աստվածների» մասին:

Եվ ահա Ծանթի 26 մարտ, 1913 թվակիր նամակը, որտեղից իմանում ենք, որ ստացել է անհամբեր սպասված ցյուրերը և բավարարված հարցասիրությանը իր տպավորություններից ու վերաբերմունքից է խոսում:

Գրողի հոգին ամբողջապես բաց է ընկերոջ առաջ:

Ծատ կողմերով հետաքրքիր այդ նամակին բացառիկ տեղ է վիճակված ոչ միայն գրողի ապագա նամակահիում, այլև շանթագիտության մեջ առհասարակ: Մեծ գրողի ստեղծագործությունը գնահատելու փորձ կատարող յուրաքանչյուր ոք հազիվ թե անտարբեր անցնի այն մտքերի ու դատողությունների կողքով, որոնք արտահայտվել են այդ նամակում՝ էբրև իրադարձությունների անմիջական արձագանք: Մինչ այդ «մատի վրա համրվելիք մարդոց կողմն համակրանք ու գնահատություն» վայելած գրողը հանկարծ իրեն զգում է գրական կյանքի հորձանուտում:

1 Մեր նախորդ հրատարակումները տե՛ս ա) «Դպրություն», 1991, 29 նոյեմբերի, բ) «Բանքեր Երևանի համալսարանի», 1992, թիվ 1:

Իր երկով պայմանավորված գրական-թատերական մթնոլորտը գնահատելով՝ Ծանթը խորիմաստորեն տարբերակում է երկու հստակ արտահայտված կողմ՝ քանակական-ընդհանուրը՝ որպես **հանրային երևույթ** և առանձին արտահայտությունները՝ իբրև **որակ**:

Երևույթն ամբողջությամբ հասարակական վերաբերմունքի ու ճաշակի դրսևորում գնահատելով՝ գրողը նրանում խոշոր իմաստ է տեսնում: Պարզվում է, որ Ծանթը խորապես նավաստացի է «մեր հասարակության գրական տրամադրությունների մեջ» կատարվելիք հեղաշրջմանը և հուզապես բավարարված է, որ այդ հեղաշրջումը երևան է գալիս իր «Հին աստվածների» առիթով: Նա ընդգծում է երևույթի հասարակական կողմը, այն, որ իրեն «ամենեն ավելի բավականություն պատճառող այդ ընդհանուր հետաքրքրությունն է», Ժողովրդի մտավոր խավի, հանրային մտքի տեղաշարժը, «այդ լայն հասարակական շարժումը» (ընդգծումը իմն է— Ն. Վ.):

Երևույթի երկրորդ կողմը զուտ որակականն է, ուր նրա կարծիքով արժեքավոր շատ բիչ բան կա:

Այժմ ավելի քան պարզ է երևում գրողի դատավճռի ողջ հետաքրքրությունը, ուր ամենից առաջ խոսում է նրա՝ գերազանցապես «Հին աստվածներով» պայմանավորված գեղագիտական հայացքների որոշությունն ու կայունությունը: «... թե չէ (հանրային մեծիմաստ տեղաշարժից զուտ— Ն. Վ.) այդ լրագրական հոդվածները, այդ իրար կապող դատաստաններն ու թատերական գրախոսությունները իրենց ըսածովը ինձի համար շատ քիչ բան ունին գրավիչ ու ազդու. ստոնք մեծ մասով խեղճ ու տափակ դատողություններ են, հաճախ տգետ»:

Խոսքը հրապարակի վրա դրված երկի և նրա շուրջ ծավալված գրույցի գեղագիտական հարաբերակցությանն է վերաբերում: «... ամենեն լավերն անգամ,— շարունակում է գնահատել իր կարդացած նյութերը,— դեռ չըսին բան մը, որ ինձի համար խոր ըլլար, որո՞ւ մասին ես դեռ մտածած չըլլայի, որն ինձմե բարձր ըզգայի, ըլլա դրական, ըլլա բացասական տեսակետն»: Եվ, վերջապես, գրողը եզրափակում է. «Այնպես որ...» դեռ ստիպված եմ սպասելու իմ քննադատին»:

Ծանթն սպասում էր հասուն, բանիմաց խոսքի և իրավունք ուներ ժամանակի քննադատական մտքից ավելին ակնկալելու: Նա Լիսիցյանից խնդրում է «Նոր հոսանք» ամսագիրը, ուր իր «Կինը» վիպակի արտատպումից բացի, տեղ էր գտել նաև Ն. Աղբալյանի «Երազ և մեկուսացում» հետազոտությունը՝ նվիրված «Հին աստվածներին»:

Սակայն ի դեմս մտերիմ ընկերոջ նա գտա՛վ «իր քննադատին»,— չենք կարող ասել: Ինչպես որ չենք կարող ասել, թե հետագայում՝ «**ոլորտմամյա գրողը**» լիովին հա՛շտ էր «**ոլորտմասունամյա ընթերցողի**» համակարգող, ամփոփ վերլուծության<sup>2</sup> եզրահանգումներին:

Այս հարցերին կատասխանեն ապագա հետազոտությունները:

Եղելությունների անմիջական ներգործությամբ գրողն իր ստեղծագործության հասարակական բնույթը, իր երկերի մասսայականության չափը գնահատելու առումով հետաքրքիր մտքեր է արձարծում: Նա անթաքույց տարակուսանքով է խոսում իր ստեղծագործության ժողովրդականության մասին և կատարվածն իր համար ամենից առաջ անսպասելի է համարում այդ իմաստով: Անգամ զանգվածային հետքրքրության, հրապարակային քննարկումների պայմաններում նա զգում է, որ «այդ մակդիրը (ժողովրդականություն— Ն. Վ.) շատ խորթ կուզա ինձի»:

Դատողությունների այս շարքը տրամաբանական ամփոփման է հանգում, երբ գրողն իր հայացքը ժողովրդից ու ժողովրդականությունից դարձնում է իրեն, նայում իր հոգու խորքերը:

«Զգիտես ինչպես հասարակության, ժողովրդի շրջանի մեջ լինել կը ցանկանամ, այսինքն մեր ժողովրդի. և ինչպես գործ մը տեսնելու, շարժման մեջ լինելու պապակը կայրե սիրտս»,— երազել էր տարիներ առաջ: Եվ հիմա, որ երազը կարծես իրականանում էր, («ա, ինչպես ասում են՝ չէր ճիրհում դափնիների վրա, այլ առաջվա պես կարող էր ասել, թե «ավելի լայն գործունեության մը փափագը» «իմ սիրտս ալ կրծող որդերն են»): Եվ ահա նրա սիրտը նորից բաց է ընկերոջ առաջ: «Հիմա,— գրում է նա,— ինչ որ մեջս պարզ ու խոր կերպով կ'ըզգամ՝ իմ միշտ հին ու միշտ նոր ծարավս է, ծարավս գրական աշխատանքի»: «... թողնենք ամեն կողմնակի աշխատանք. ... թողնենք ու երթանք, որ անգամ մըն ալ փորձեն գրագետի կյանքով ապրելու ամբողջապես ու գրական աշխատության նվիրելու իմ բոլոր ուժերս»: Գրողի համար ներքին խոր համոզմունք էր, որ եկել էր հասարակությանը լավագույն գործերով ներկայանալու, հետևաբար և՛ նյութական հայթայթելու բոլոր «չեղակի գրադոմներին» ձերբազատվելու ժամանակը:

Մտամփոփ, ներփակ անհատի այս և մյուս ինքնարտահայտումները նրա ետը ճանա-

<sup>2</sup> Տե՛ս Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. 1, Պետրոս, 1959, էջ 78—84:

չկու գյուտեր են: Հայտնի է, որ Ծանթի անձը անգամ իր մերձավոր ընկերներին է կական չափով մնացել է անձանոթ: Իր կտրուկ մտքը՝ «... չեմ կարծում թե մեկը ճանաչել է նրան», (Լ. Ծանթին— Խ. Վ.) Ս. Վրացյանը փաստում է մի օրինակով, որ այս դեպքում առանձնակի կարևորություն ունի... «Նիկոլ Աղբալյանը,— նկատում է նա,— որ Ծանթի ամենից մտերիմ ընկերներից էր, ասում էր՝ «Մեր Լևոնը կոնկրետ մարդ է»: Ուզում էր առել, թե իր ներքին անձը դյուրությամբ բաց չէր անում արտաքին աշխարհի առջև»<sup>3</sup>:

Մի նրբին կես՝ «Հին աստվածների» առնչությամբ:

Հայտնի է, որ Ծանթն իր տպագրած երկերը հետագայում չի վերանայել-վերամշակել (բացառությամբ քերթվածների): Այս իմաստով նշանակալից է նրա մի թեաքար խոստումն իր համբավավոր երկի կապակցությամբ. 1918-ին, Կովկասում «Հին աստվածներն» արտատպելիս, Ծանթը չի բացառել դրամայում փոփոխություններ մտցնելը, «որևէ բան փոխելը», սակայն դա «հիմա շատ կանուխ» ու անժամանակ է համարել և սահմանափակվել «մանր-մունր բավական սրբագրություններով»<sup>4</sup>:

Ինչ խոսք՝ շատ կարևոր էր գիտենալ, թե գրողի այս հեռավոր ցանկության հիմքում եղել են որոշակի նկատառումներ, որ հետո անտեսվել են, նրա հարցադրման մեջ դեր ունեցել է բննադատության (ասենք՝ Ն. Աղբալյանի) որևէ դիտողություն: Սրանք հարցեր են, որոնց պատասխանելը գրեթե անկարելի է: Սակայն ինչ վերաբերում է սրբագրումների, ապա դրանց կարևորությունը նա մի անգամ ևս շեշտել է 1917-ին՝ «Հին աստվածների» թուտոնյան հրատարակչին ուղղված խոսքում. «Արտատպեցե՛ք Թիֆլիսի օրինակեն. Պոլսի օրինակին մեջ բաց ինկած տողեր և սխալներ կան»<sup>5</sup>:

Մշտապես կարիքի մեջ գտնվող, իր թանկ ժամանակը դրամ հայթայթելուն տրամադրած մեծ գրողը «Հին աստվածների» շնորհիվ մի պահ շունչ է բաշում: Դրամայի քերած եկամուտը ոչ միայն դյուրացնում է նրա կյանքը, այլև հնարավոր դարձնում եվրոպական խաղաղ մի անկյունում բացառապես գրական աշխատանքով զբաղվելու ծրագիրը, որը, ավագ, նրան փառքի երազված դափնիները չբերեց:

Սկսվում է առաջին աշխարհամարտը... Եվ տեսնել է պետք, թե նյութական ու հոգևոր ինչպիսի՞ դաժան արքանի մեջ է վառ հույսերով Եվրոպա տեղափոխված գրողը: «Կայսր» դրաման գրելու հոգեկան բռնադատումի օրինակը բավական է<sup>6</sup>:

Եվրոպան ընդամենը փրկելու էր նրան մոտալուտ զարհուրելի սպանոցից, ինչի մասին նա պիտի հետագայում գրեր իր՝ թերևս ամենաազդեցիկ տողերը. «... կուզեի մեկ-երկու տարի ինքզինքս ամբողջովին նվիրեմ գրականության..., նյութապես անկարող էի...: «Հին աստվածներու» հաջողությունը կարելի դարձուց իմ ու Ջավոյի ցանկությունը...: ... առանց անոր բերած 3—4 հազար ռուպլիին ես տեղես երթալ չէի կրնար և հիմա իմ բոլոր Պոլսի բնկերներուս ու ծանոթներուս հետ միասին ով գիտե որ լերան գլխուն մորթված կ'ըլլայի. ուարմանայի խաղեր ունի բաղդը»<sup>7</sup>:

Ներկա նամակներում էական տեղ ունի նաև «ընկերական մտերիմ կապերով օղակված գործը»՝ «Լուսաբերը», հատկապես գրքի՝ արևմտահայերենի փոխադրելուն առնչվող այլևայլ հարցեր: Ծանթի ջանքերով արդեն կյանք էին մտել «Լուսաբերի» «Այբբենարանը», Ա, Բ, Գ, Դ, դասարանների ընթերցարանները: Աշխատանք, որ գրողից հսկայական ծանանակ է խլել: «Տաճկաստանի հուրաբերական խաղաղությունը» նպաստում է դասագրքի հետզհետե արմատ գցելուն, նկատելի աշխուժանում է «Լուսաբերի շուկան»: Ծանթը ոգեվորված խոսում է վերջին երկու՝ Ե և Զ դասարանների ընթերցարանները կազմելու մասին:

Դասագիրքը արևմտահայերենի փոխադրելու ընթացքը, տեղական պայմաններին հարմարեցնելու անհրաժեշտությամբ, վեր է ածվում գրեթե նորովի կազմելուն: Այս կապակցությամբ բնականաբար Ծանթը մասնավոր ուշադրություն է դարձնում արևմտահայ գրականության նմուշների ընտրությանը, որանց տեսակարար կշռի մեծացմանը: Ե և Զ դասարանների արևմտահայ նյութերը համալրելու նպատակով նա անհրաժեշտ է զգացել Վիեննայի Մխիթարյանների գրադարանում աչքի անցկացնել վերջին հիսնամյակի արևմտահայ «ողջ գրականությունը»:

Քիչ խուցընդոտներ նա չի հաղթահարել արևելահայ գրականության նմուշները փոխադրելիս: Գործը գրեթե մոտեցել է նյութերի նոր համակարգ ձևավորելուն:

Այս կապակցությամբ նամակներում արժարժվող հարցերը կարևոր նշանակություն ունեն հայ դպրոցի, մանկավարժության և մայրենի լեզվի դպրոցական դասագրքերի ստեղծ-

<sup>3</sup> Ս. Վրացյան, Անձինք նվիրյալք, Պեյրուք, 1969, էջ 148:

<sup>4</sup> Տե՛ս ներկա հրատարակման թիվ 81 ծանոթագրության վերջում:

<sup>5</sup> Լևոն Ծանթ, Հին աստվածներ, Պոսթոն, 1917, էջ 1:

<sup>6</sup> Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, թիվ 1, էջ 122—123:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 132:

ման պատմության համար: Այդ հարցերից շատերը այսօր էլ տեսական ու գործնական  
Եզանակություն են պահպանում:

Կենսագրական մի փաստ: Պոլսում եղած օրերին, «Լուսաբերի» հրատարակման գործը  
բյուրացնելու, ավելի եկամտաբեր դարձնելու, ինչպես և առհասարակ լրացուցիչ եկամտի  
սկսնկալումով, Ծանթը ծրագրում է «Արաքս» տպարանի և «մեկ-երկու գիրք դասագիրք  
ունեցողներու հետ հրատարակչական-գրավաճառական ընկերակցություն» ստեղծել: Նա  
ընդհուպ դիմում է գործնական քայլերի, սակայն ձեռնարկը չի իրագործվում:

Հրապարակվող նամակներում ևս ընթերցողը կհանդիպի այլազան փաստերի, որոնք  
բնութագրում են Ծանթ աճհատին: Հիշենք, որ նամակների քննադրերը պահպանում են Հա-  
լաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում, Ստ. Լիսիցյանի ֆոնդում:

Նամակները տպագրվում են ուղղագրական և կետադրական անճշան միջամտությամբ.

Խ. Գ. ՎԱՐՈՒԱՆՅԱՆ

1

1913, փետր[վար] 10, Պրինկիպո

Սիրելի՛ Ստեփանս, ամենն ատաջ ընդունե՛ք իմ ջերմ շնորհակալությունս  
դու հեռագրիդ, շնորհավորանքիդ ու հոգածությանդ փոխարեն<sup>1</sup>: Լրագիրներեն  
իմացած էի, որ «Աստվածներս» իրենց վրա ուշադրություն են գրավեր Քիֆ-  
լիսի երկնքին տակ<sup>2</sup>. հիմա ալ կը լսեմ, որ ենթարկեր եք դատի. խեղճ աստ-  
վածներս... հետաքրքիր եմ գիտնալու ձեր հանած վճիռը<sup>3</sup>: Գալով ուզած լիա-  
շորությունդ՝ գտնես պիտի նամակիս կից<sup>4</sup>. բավական զուլս հոգնեցուցի մինչև  
իմբարգրեցի. ձրի ներկայացնելու թույլ չի տաս ոչ ոքի. մնացածը կարգադրե  
ինչպես ինքդ հարմար դատես: Իսկ ես անցնեմ մեր Լուսաբերին<sup>5</sup>: Նախ այս-  
քանը ըսեմ՝ որ հակառակ բոլոր անպատեհություններուն՝ վաճառումը այն-  
քան ալ գեշ չէ<sup>6</sup>, որչափ որ կ'ենթադրեր «Արծիվը»<sup>7</sup> տարվան սկիզբը հուսա-  
հատորեն. գրեթե ճիշտ նույնը, ինչ անցած տարի: Այբբենարան ծախված էր  
6500 օրինակ դեկտեմբերին վերջը. «Առաջին տարի» են ծախված էր 3500 օրի-  
նակ (1000-ի չափը նախորդ տիպեն էր մնացած) նույնպես դեկտեմբերին  
վերջը. նույն միջոցին երկրորդ տարին ծախված էր 2000 օրինակեն ավելի:  
Մինչև հիմա այդ թիվերը կրնան թեթև փոփոխություններ կրած ըլլալ, բայց  
չեմ կարծեր մեծ բան մը: Վարժություններու Բ տարին, ինչպես արդեն գի-  
տես, պատրաստ է բոլորովին, բայց «Արծիվը» ուշացավ հրատարակելու,  
վերջն ալ խնդրեց, որ հրատարակենք առաջիկա տարվան համար. համաձայ-  
նեցա: Մեր պայմանի համեմատ ամեն ամիս ստանալու էի տասերեք ոսկիի  
չափ, սակայն իրապես ստացեր եմ մինչև հիմա ընդամենը 355 ռուբլի, ուրկե  
115 ռուբլի ըրած ծախքերս են ընթերցարաններուն համար, մեջը հաշված կլի-  
շենները. որին իմ հաշվես անցեր է մինչև հիմա ընդամենը 240 ռուբլի:

Այս տարի տպելու չենք այբբենարան, ոչ առաջին տարի, և ոչ երկրորդ  
տարի. պիտի տպվի Գ և Դ տարիները (այլ և վարժությունները՝ Ա և Բ տա-  
րի): Ի՞նչ պիտի ըլլա այդ հատորներու գինը. և մենք ի՞նչ պիտի ստանանք  
ամեն մեկ օրինակի փոխարեն. դուն այդ հաշիվներեն աղեկ կը հասկընաս.  
Ինձամ մը հաշվե՛ և գրե՛ ինձի, որ հայտնեմ «Արծիվին» ու համաձայնության  
գանք: Ես կ'ըր հաշվով կը մտածեմ Գ տարվան գինը ըլլա վեց ղուրուշ, իսկ  
Դ-ինը յոթը ղուրուշ. իսկ ամեն մեկ օրինակի համար Գ և Դ տարիներու հա-  
մար ստանանք 10 կոպեկ. այբբենարանի առաջին և երկրորդ տարիներու  
համար պահելով հին սակը՝ օրինակը 5 կոպեկ: Ասիկա ավելի պարզ հաշիվ  
է՝ թե չէ կրնանք առաջարկեր այբբենարանի համար օրինակը 5 կոպեկ, I  
տարին՝ 6 կոպեկ, II տարին՝ 7 կոպեկ, III տարին՝ 8 կոպեկ, IV տարին՝ 9  
կոպեկ (որը մոտավորապես վերի հաշվին կուգա):

Կա երկրորդ կետ մըն ալ՝ «Արծիվը» կուզե քանի մը տարվա ապահովու-

Յյուն ստանա մեզնե, այսինքն քանի մը տարվա համար պայմանագրվենք. կարծեմ կը վախնա, որ արևմտյան լուսաբերներու տպագրութիւնն ալ փոխադրենք կովկաս, մանավանդ եթե քաղաքական դեպքերը հարմարութիւն ստեղծեն այդ ուղղութիւնը. իրենք ալ հիմա լրջորեն կը մտածեն փոխադրվին կարին. բայց այս բոլորը դեռ օդի մեջ բաներ են: Մտածե՛, անտեղութիւն մը կա՞, որ օրինակ երեք տարիով կապվինք և ամբողջ գործը մեկ-անգամով հանձնենք անոնց, բնականաբար և կլիշեները. և ի՞նչ պայմաններ պետք է դրվին որ փոխադարձաբար վստահութեան զեղծումն երկյուղ չը մնա մեջ տեղը: Աս ալ աչքի առաջ ունեցիր, որ ես այլ ևս ոչ-մեկ պայմանով Պոլիս մնալ չեմ ուզեր. խեղդվեցանք հոս ու ժանգոտեցանք. քաղաքական պայմանները ցավազար, շրջապատը զզվելի, դպրոցներն ու ամեն հանրային գործ ողորձելի. և այս բոլորի վրա ալ օրական ուղիղ հինգ ժամ ճամփորդութիւն պիտի ընեմ, որ զավակներուս համար առողջ օդ ունենամ: Դուն գիտես արդե՞ն, որ իմ Պոլիս ձգտելու գլխավոր պատճառներն մեկը լուսաբերն էր. ըրի՛ ինչ որ հանձն էի առեր. կը լրացնեմ հինգ գրքերու հրատարակութիւնը և կ'ուզեմ այլևս օձիքս ազատեմ: Սիրով պատրաստ եմ մեկ-երկու տարին անգամ մը քանի մը շաբաթով գալու ու նոր հրատարակութիւններուն հսկելու, սրբադրելու, նայելու և ընելու ինչ որ հարկ համարենք: Եվ այդչափը կը կարծեմ կատարելապես հերիք է: Եթե մեր հրատարակիչներն գոհ մնանք՝ ատոր ալ բընավ կարիք չմնար. այդ բոլորը կարելի է ընել և հետուն:

Ես հիմա ամբողջովին զբաղված եմ Գ և Դ տարիներու համար տեղական նյութեր փնտրելով. եղած ամբողջ գրականութիւնը նորեն աչքն կ'անցնեմ ու կը նշանակեմ. խլամ սաստիկ շատ, պետքի բան սաստիկ քիչ: Նյութերու հիմնական մասը իհարկե կը մնա նորեն նույնը՝ արևելայնի մեջ եղածը. թույլ կտորները ջնջած եմ. շատ երկարները պետք է սեղմեմ քիչ մը ավելի. իսկ երկրորդական արժեք ունեցողները աշխատելու եմ փոխարինեմ արևմտյան գրականութենէն առնված նման կտորներով: Եղածի փոխադրութեան ժամանակ գլխավոր դժվարութիւնը Հանեսի պոեմներն են՞. Բ տարվան մեջ ըրած փոփոխութիւններուս մասին ոչինչ չգրեցիք՝ գո՛հ եք, դժգո՛հ եք և ինչե՞ն. այնպես որ նորեն ստիպված եմ ընելու խելքիս կտրածը: Գալով ձեր ամառը՝ հոս գալուն՞, եթե քաղաքական պայմանները քիչ մը ավելի չը պարզվին՝ իհարկե չեք գար. բայց եթե պատերազմը վերջացավ ու քիչիկ մը գործերը իրենց սովորական ընթացքը առին՝ ձեր գալը հրաշալի բան կ'ըլլա. թե՛ եղած շորս տարիները աչքն կ'անցընենք նորեն անգամ մը, թե՛ հաջորդ երկու տարիները կարելի է հաստատ ծրագրել, եթե ոչ վերջնապես կազմել. այլև հոստեղի հրատարակութեան խնդիրը Արծիվի հետ կարելի է վերջնապես կարգադրել շատ ավելի հաստատ հիմքերու վրա, քան եթե միայն ես ըլլամ կնքվելիք պայմանագրութիւնը ստորագրողը: Երկու-երեք շաբաթն կը զրկեմ ձեզի Գ և Դ տարիներու նկարներուն ցանկը, որ նկարել տաս ու կլիշե պատրաստվի. հունիսի 1-ին պետք է սկսվի անպատճառ տպագրութիւնը, որ մինչև օգոստոսի կեսերը կարելի ըլլա ավարտիլ:

Տարի մը առաջ հրատարակչական ընկերութիւնը դիմեր էր ինծի թուրքերնի կտորներ ընտրելու թարգմանութեան համար. ես ալ մատնանիչ ըրի լուրջ ու աշխատող տղա մը՝ Սարգիս Սրենց<sup>10</sup>. և հիմա մարդը բնական կերպով կը հետաքրքրվի գիտնալով՝ արդյոք այդ հարցը որևէ պատճառով վերցած է ընկերութեան օրակարգին և կամ ընկերութիւնը ի՞նչ դիտավորութիւն ունի այդ մասին: Գրե՛ ինծի՛ ի՞նչ պատասխանեմ իրեն, ըլլա պաշտոնապես թե անպաշտոն, միևնույնն է:

Հրատարակչականին հետ կապված ուրիշ հարց մըն ալ տամ քեզի և սուրբն իմ մասին: Կը ցանկայի առանձին-առանձին կամ հատորով մը հրա-

տարակեմ իմ նախորդ երեք դրամաներս, որոնք մինչև այժմ ամսագիրներու մեջ են միայն տպված («Ծսի մարդը», «Ուրիշի համար» և «Ճամբուն վրա»<sup>11</sup>, երեքը միասին միջին երեսներով երևի 200—240 երեսի շափ): Նույնպես և վերջին վիպակս՝ «Կինը»<sup>12</sup>, որ անցած տարի տպվեցավ հոս Ազատամարտի հավելվածին մեջը, 80 երեսի շափ է իր ծավալը: Արդ կուզեի գիտնամ, արդյոք ընկերությունը հրատարակել կուզեր այդ երկերը, և մասնավորապես դուն հարմար կը գտնե՞ս, որևէ անպատեհություն չկա՞: Եվ եթե հարմար է՝ որո՞նք են ընկերության պայմանները՝ ձեռքս զգալի գումար մը կը հասնի՞ և վերջապես ի՞նչ խորհուրդ կու տաս՝ ես ի՞նքս դիմեմ, թե ինչպես:

Այլ և կը խնդրեմ քեզմե, որ շմոռնաս ու գրես ինծի Զոհրաբյանի ու Ղամբարյանի հասցեները. մինչև հիմա առանձին գրքով ինչ որ ունիմ ղրկեր եմ. ղրկեմ նաև «Հին աստվածները» երախտագիտությունս հետ<sup>13</sup>:

Թերթերուն մեջ աչքովս ինկավ, որ քու մանկական պիեսներդ առանձին հրատարակեր ես. շատ սիրուն բան ես մտածեր. ես քեզի կը պնդեմ, որ Հասկերին հանես և հատոր մը շինես Սատալյանի պատմվածքներին<sup>14</sup>, կամ գուցե երկու կամ երեք գրքույկ՝ նայելով տարիքին: Հրատարակվածներդ գոնե մեկերկու տասնյակ օրինակ ղրկե Պոլիս. հոս ալ մեծ պահանջ կա մանկական գրականության, մանկական թատրոնի. լեզուն անշուշտ արդելք է, բայց և այնպես փնտրող կը ճարվի:

Ես քանի կ'երթամ այնքան ավելի կը համոզվիմ, թե ինչ լուրջ գործ ես տեսեր դուն քու Հասկերովդ<sup>15</sup>. 4—5 տարի է արդեն, որ Հասկերը ամեն օր երեխաներուս ձեռքին է եղած. հիմա ալ այդ սիրուն վեց հատորները իրենց սեղանին վրա է միշտ ու գրեթե ամեն իրիկուն բան մը կը կարդացվի հոնկե՝ կամ Զավոն կամ Սուրիկը ինքը. եթե գիտնաս ինչ ահագին տեղ կը բռնեն այդ հատորները երեխաներուս հոգեկան աշխարհին մեջ. իրենց խոսակցությունը, խաղերը, երևակայությունը շարունակ հյուսված են Հասկերին իշխող դեմքերով, դեպքերով, անուններով, ոճերով ու կատակներով, այնպես հարազատ են այդ հատորները մեր տան մեջ, որ ես բնավ չեմ կրնար երևակայեր, թե ինչպես պիտի ըլլար՝ եթե ատոնք չըլլային. արդեն Զավոն բացարձակ անքաղաքավարություն մը կը մերժե ուզողներուն ու տունեն դուրս ոչ ոքի չի տար երբեք:

Կը համբուրեմ քեզի ու կը ցանկամ քու բազմաթիվ ձեռնարկություններուդ ու աշխատություններուդ սրտանց հաջողություն. ջերմ բարևներս տիկին Կատարինեին. սեղմելով ձեռքդ՝ Լևոն Սեղբոսյան:

## 2

1913, փետր[վար] 23, Պրինկիպո

Սիրելի՛ Ստեփանս,

ասկե տասը օրվան շափ առաջ քեզի նամակ մըն եմ գրած, ուր դրած էի նաև դրամաներուս լիազորության թուղթը<sup>16</sup>, անշուշտ արդեն ստացած կ'ըլլաս: Անցած շաբթու ալ Բագու Արրահամեն (Զավոյի եղբայրը) լիազորության իրավունք խնդրող հեռագիր մը ստացա. բնականաբար իսկույն պատասխանեցի, որ այդ իրավունքը արդեն տված եմ քեզի. վրայեն երկրորդ հեռագիր մը ստացա, ուր կը խնդրե միայն այս սեզոնի համար և միայն Բագուի հաճար տամ իրեն այդ լիազորությունը. մտածելով, որ անշուշտ անհրաժեշտություն մը կա մեջտեղը, երեկ իրեն հեռագրեցի համաձայնությունս, ավելցնելով, որ քեզի իմաց տա: Բայց և այնպես ես ալ իմ կողմես ահա՛ կ'ըշտապիմ քեզի գրելու, վախնալով որ միգուցե իրարմե անտեղյակ տարրեր կարգադրությունեղ ընեք և իմ պատճառովս դուն ալ, ան ալ անհամ դրություն մեջ լինաք: Աս մեկ:

Երկրորդ ալ նորեն հանձնարարություններ ունիմ քեզմե խնդրելիք: Երբ դրամատիկական ընկերութենէն դրամը ստանաս, կը խնդրեմ որ հարյուր ռուբլին նորեն հասցնես Ֆիլիպ վարդազարյանին<sup>17</sup>, իսկ հիսուն ռուբլի ալ կը խնդրեմ որ ինքդ անձամբ հանձնես իշխանուհի Մ. Քումանյանին<sup>18</sup>: Մնացած գումարն ալ երբ ինծի ղրկելու ըլլաս՝ ղրկե՛ շեքով մը իմ անունիս (Լեոն Սեդրոսյան) և ապահովագրած նամակով շեքը ղրկե՛ իմ հասցեիս՝ Constantinople, Prinkipo Wisam, Z. S.:

Ընդհանրապես ամեն բան՝ հեռագիր, նամակ, դրամ, ինչ ալ ըլլա ասկէ ետքը այդ հասցեով ղրկե՛ միայն. պարզ ու կանոնավոր հասցե է: Միայն կլիշենները լավ է ղրկել տաս նորեն Արծիվի հասցեով:

Եվ քանի որ հիմա այսպիսով գրեթէ իմ բոլոր բյուտեճես քու ձեռքդ է, խնդրեմ բարի եղի՛ր հանդպե՛ անգամ մը Գուտեմբերկ գրախանութը Գալըստյանին. ես հոն փոքր հաշիվ մը ունիմ իմ հոտ եղած ատենես. եթէ ծախված են արդեն մոտը եղած զրօքերս՝ կարդադրե՛ այդ հաշիվն ալ ու փակե՛:

Նամակիս մեջ կը դնեմ Գ տարվան ընթերցարանի նկարներուն ցանկը. եթէ սպասեմ բոլոր նկարներու խմբագրութեանս՝ նկարները շատ կ'ուշանան. մնաս շունի այդ 50 նկարն ալ առաջին տպագրութեան համար հերիք է: Շուտով նկարել տո՛ւր և այնպես կարգադրե՛, որ մայիսի 1-ին անպատճառ ձեռքս ըլլան պատրաստ կլիշենները, որպեսզի Գ տարվան տպագրութիւնը մինչև շոտտոսի կեսերը անպատճառ ավարտի և որ ինքս անձամբ կարող ըլլամ երկու զրօքերու ալ տպագրութիւնը ծայրին ծայր հսկելու: Ես հիմա ամբողջովին կ'աշխատիմ լուսարեւներու փոխադրութեան, կազմութեան ու խմբագրութեան գործովը. մեկ-երկու շաբաթեն կը ղրկեմ նաև Գ տարվան նկարներուն ցանկը, որ ամենաուշը մինչև հունիս կեսերը անոնք ալ ձեռքս ըլլան:

Նկարները նորեն նկարել տո՛ւր. տպածեն շինված կլիշենները աղտոտ են ու թույլ. քանի մը հատը նույնիսկ շատ գեշ, թղթ:տե հոս տպված Բ տարին այդ աչքով ու պիտի տեսնես:

Կ'ըսպասեմ նախորդ նամակիս պատասխանին և պինդ-պինդ համբուրելով քեզի՛ կը սեղմեմ ձեռքդ՝

Լեոն

3

1913, մարտ 26, Պրինկիպո

Սիրելի Ստեփանս, անհամբեր կսպասեի քեզմե նամակի մը և հիմա խորապես ուրախ եմ ստացած նամակիս համար: Քու գնահատութիւնդ, քու համակրանքդ, քու այդ տաք վերաբերմունքդ<sup>19</sup>, գիտես անշուշտ, որ ինծի համար շատ թանկ արժե: Շատ գոհ եմ, որ «Հին աստվածներու» առիթով երևան եկավ մեր հասարակութեան գրական տրամադրութիւններուն մեջ կատարվող հեղաշրջումը: Արդեն անձնապես ալ ինծի ամենն ավելի բավականութիւն պատճառողը այդ ընդհանուր հետաքրքրութիւնն է ու այդ լայն հասարակական շարժումը. թե չէ՝ այդ լրագրական հոդվածները, այդ իրար կապկպող դատաստաններն ու թատերական գրախոսութիւնները իրենց ըսածով ինծի համար շատ քիչ բան ունին գրավիչ ու ազդու. ատոնք մեծ մասով խեղճ ու տափակ դատողութիւններ են, հաճախ տգետ. ամենն լավերն անգամ դեռ չըսին բան մը, որ ինծի համար խո՛ր ըլլար, որու մասին ես դեռ մտածած չըլլայի, որը ինծմե բարձր զգայի, ըլլա դրական, ըլլա բացասական տեսակետ: Այնպես որ քու ղրկած կտրուկներուդ առատութեանն ու բազմադիմութեանը<sup>20</sup> հակառակ՝ դեռ ստիպված եմ սպասելու իմ քննադատիս<sup>21</sup>: Անշափ շնորհակալ եմ քեզմե, սիրելիս, այդ բոլորը այդպես սիրալիք կերպով հավա-

քելուդ և ինծի ղրկել մտածելուդ համար: Ատոնցմե մեկ մասը հոս ու հոն արդեն կարդացեր էի, բայց մեծ մասը՝ ո՛չ: Ընդհանրապես շատ տարօրինակ է հիմա իմ ու Ջավոյի դրուժյունը, երբ մեր կղզիի այս մենության մեջ կը կարդանք այդ աղմուկի ու իրարանցումի մասին, որ բարձրացեր է անունիս շուրջը և որու հեռավոր խուլ արձագանքները միայն կը հասնին մեզի և ան ալ միշտ շատ ուշացած: Եվ գիտե՛ս, ինչքա՛ն լավ է, որ այտպես է. թե՛ ավելի հանգիստ եմ ու ազատ ավելորդ յուզումներե և թե ամեն բան անհամեմատ ավելի էլարդ ու սառն կը տեսնեմ: Առաջին լուրերը միայն մեզի շատ զարմանք պատճառեցին, այնքա՛ն անսպասելի էր այդ բոլորը և այնքա՛ն անսովոր եմ եղած ես «ժողովրդականություն»։ հիմա անգամ այդ մակտիրը շատ խորթ կու գա ինծի, բայց ինչպես որ գիտես՝ մարդս շատ հարմարվող կենդանի է: Հիմա ինչ որ մեջս պարզ ու խոր կերպով կ'ըզզամ՝ իմ միշտ հին ու միշտ նոր ծարավս է, ծարավս գրական աշխատանքի: Ահա՛ այս երրորդ անգամ վճռեր ենք Ջավոյի հետ՝ թողնինք ամեն կողմնակի աշխատանք, և ամեննն սուաջ ինծի ուտող ուսուցչությունը մեր այս խեղճ պայմաններուն մեջ, մեր այս խեղճ միջավայրին մեջ. թողնինք ու երթանք, որ անգամ մըն ալ փորձեմ գրագետի կյանքովը պարելու ամբողջապես ու գրական աշխատության նվիրելու իմ բոլոր ուժերս. երկու անգամ ըրինք այդ փորձը ու չը հաջողեցա. կ'ուզենք փորձենք հիմա երրորդ անգամ. կ'ըսեն սուրբ թիվ է երեքը. տեսնենք:

Վեց հարյուր բուրլի շեքը ստացած եմ ու անշափ շնորհակալ քեզմե: Եւտ կը ցավիմ եղած թյուրիմացություններուն համար<sup>22</sup>, կը հուսամ ասկե հտքը չի կրկնվիր, քանի որ ինքդ անմիջական հարաբերության մեջ կ'ըլլաս Արրահամին հետ. բայց իսկապես ես ալ հանցավոր չեմ, քանի որ երկուտողանի հեռագիրներու հիման վրա ստիպված էի կարգադրություններ ընելու. այս բոլորի մեջ իսկական հանցավորը դեպքերու անակնկալ ու արագ ընթացքն էր, որուն պետք է հասնեինք այս կամ այն կերպով:

«Մեր իրականության մեջ սովորական եղող ավազակային հակումներու» մասին<sup>23</sup> ինծի գրեր էին նաև Բագունեն. նույնիսկ մտածեր են, որ ես ֆիկտիվ կերպով դրամաս ծախեմ Տ. Բեգատյանին<sup>24</sup>. բայց ես կը կարծեմ, որ առայժմ ավելորդ է դեռ. հագիվ թե այս վայրկյանիս ինծի զրկել ուզենան. այսինքն ուզենալը գուցե ուզենան, բայց կը քաշվին, գոնե առայժմ. մյուս կողմեն ալ ծախելով-մախելով կարծեմ ոչինչ չի փոխվիր. ինծի ըսին հոս, որ գրքի առաջին անգամ ուր տպված ըլլալն է կարևոր օրենքի տեսակետեն. այդ օրենքներուն մասնագիտորեն ծանոթ մեկուն հարցո՛ւր անգամ մը, սիրելի՛ս և ինծի գրե՛: Ուրիշ հանձնարարություն մ'ըն ալ. այս տողերս ցո՛ւյց տուր Ավետյանին<sup>25</sup>, իր ծախած «Հին Աստվածներու» արժեքը թող հանձնե քեզի, «Արծիվի» միջոցով ճամբան շատ է ոլորուն. ես արդեն խոսած եմ «Արծիվի» հետ և արդեն «Արծիվը» իմ պատվերովս է ղրկած «Գիրին» այդ գրքերը: «Արծիվի» ինծի տված հաշիվը հետևյալն է. գիրք ղրկված է առաջին անգամ 192 օրինակ, երկրորդ անգամ 129 օրինակ. ճամբու ծախք եղած է (61 և 42 դր) 8 բուրլի. Գիրին գեղջ 25 տոկոս: Ուրեմն 312 անգամ 50 կոպեկեն հանած 39 բուրլի և ավելցուցած 8 բուրլի ճամփու ծախքը, այսինքն 125 բուրլի: Միայն գրեր էի «Գիրին» որ մեկ-մեկ օրինակ ղրկե տեղական լրագիրներուն շգիտեմ՝ ինչ ըրավ. բնականաբար ազ ալ կը հաշվվի:

Գրեր էիր, որ հեռագրեմ և անմիապես նոր հրատարակություն սկսվի հոտ Թիֆլիս. բայց այս անգամ ալ եղավ նույնը, ինչ որ եղեր էր լիազորության հարցի ժամանակ<sup>26</sup>, միայն այս անգամ առաջնությունը Արրահամինն է<sup>27</sup>. Ճիշտ քու առաջարկը ըրեր էր ան և ես ալ իրեն նոր էի հայտներ համաձայնությունս, որ ստացա նամակդ: Զգիտեմ ինչպես շնորհակալ ըլլամ



քեզի՛ ալ, անո՛ր ալ այդ կենդանի ու մտերիմ հոգատարութեան փոխարենն: Ես տպեր էի 1500 օրինակ, որ սպառված է արդեն. երևի շուտով Բագու կ'ըսկրսվի նոր հրատարակութունը<sup>28</sup>, գուցե նաև հոս<sup>29</sup>:

Նամակիս մեջ կը գնեմ Դ տարվան Լուսաբերի նկարները. շուտով պատրաստել տուր, որ հունիսի սկիզբները ձեռքս հասնի: Կ'սպասեմ նամակիդ Լուսաբերի Գ և Դ տարիներու մասին Արծիվի հետ պայման կապելու համար: Բ տարին կը զրկեմ շուտով:

Տիկին Կատարինեին իմ սրտագին բարևներս. իր քանի մը տողին համար անշափ ուրախ եմ. կը հուսամ լավ եք բոլորդ ալ: Ինծմե ու Զավոյեն շատ-շատ բարևներ: Համբույրներով՝

Լևոնդ

4

1913, մայիս 18, Ղալաթիա

Ա՛յ աղբեր, սա ի՛նչ լռեցիր նորեն, է՛. օր-օրի նամակ կ'ըսպասեմ քեզմե. գիտես որ ոչինչ ընել չեմ կրնար հոս առանց ձեզմե լուրի. III տարվան կլիշենները ե՛րբ պիտի հասնի. շատ ուշ կը մնանք այսպիսով. IV տարվան տպագրելը անկարելի կը դառնա. և ինչ պայմաններով պետք է որ կապվիմ Արծիվի հետ. ոչինչ չես պատասխաներ տված հարցերուս: Գ տարին խմբագրված պատրաստ է բոլորովին. ամիսեն ավելի է. նույն արևելյան նյութերն են տեղ-տեղ քիչ մը կրճատած, քանի մը հատը թողած, և նորերով փոխանակած: Դրեթե պատրաստ է և Դ տարին, բայց այսպես որ շարունակվի խելքս չի կտրեր որ այս տարեշրջանին տպագրութունը հասցնել կարողանանք: Դուն գալո՞ւ ես, թե ոչ. լավ կ'ըլլար, որ Եվրոպա անցնելես առաջ մեկ-երկու ամիս միասին ըլլայինք քեզի հետ. նախ ընդհանրապես իբրև ընկեր ու մտավոր շփում, վերջը Լուսաբերն ալ կ'օգտվեր անշուշտ թե՛ արևմտյանը, թե՛ արևելեյանը. եթե բացարձակ անկարելիութուն չը կա դեմդ, եկո՛ւր, կը հանգրստանաս, կը թարմանաս, մեր կղզին աղվոր է<sup>30</sup>. ալ ով գիտե՛ ուրիշ ատեն առիթ ունենալու ես. օգտվե՛: Համենայն դեպս երկու տող գրե՛ ինծի անմիջապես՝ ընելիքս գիտնամ:

Ղրկե՛ ինծի անմիջապես ձեր «Գիր» ընկերակցութեան կազմական կանոնագիրը. հոս կը մտածեմ «Արաքս» տպարանի, և մեկ-երկու գիրք դասագիրք ունեցողներու հետ նույն տեսակ հրատարակչական-գրավաճառական ընկերակցութեան մը սկիզբ դնենք, եթե հնար է խելքի մոտ. գրե՛ հոտ «Գիրը» ինչ առավելութուններ ու մասնավանդ անտեղութուններ ունի, որուն վրա հոս կ'ավելցնենք մերը ու կշռենք. զրկե անպատճառ և շուտով, որ մինչև օգոստոս կարելի ըլլա մարմին տալ հառաջիկա (հաջորդ) տարվան համար: Մենք օգոստոսի կեսերուն որոշած ենք հեռանալ Պոլսեն:

Արբահամը գրեր էր, որ «Հին Աստվածները» որոշեր եք Թիֆլիս տպեք<sup>31</sup>. և որ արդեն իբրև թե տպված է ըլլալու. գրե՛ ինծի ինչ վիճակի է գործը և տպվելուն պես մեկ-երկու օրինակ զրկե՛ ինծի անմիջապես: Նույնպես քու զրկած կտրոններեդ ետքը, եթե ունիս, թերթերեն հանած նոր կտրոններ<sup>32</sup> անոնք ալ որ ձեռքս հասցնես՝ շատ շնորհակալ կ'ըլլամ քեզի. մասնավորաբար Տարազի մեջ հողված մը կա եղեր Տիկլին Խանազատի կողմե<sup>33</sup>, կ'ուզեի տեսնիմ:

Անկե ետքն ալ նորեն քեզի երկու հանձնարարութուն, կը խնդրեմ Նիկոլ Աղբալյանին ըսես, որ ինծի «Նոր Հոսանքը» զրկե<sup>34</sup>. ինչո՞ւ մինչև հիմա չեն զրկած, կը զարմանամ: Երկրորդ ալ խոսե՛ Աղբալյանին և «Հորիզոնի» մյուս վարիչներուն հետ՝ արդյոք չէին ուզեր Պոլսեն թուրքական ու կառավարական

ինչպես և ազգային կյանքին ծանոթ խելացի ու փորձված թղթակից մը ունենան. խոսքս Տիգրան Զավենի մասին է<sup>35</sup>, որ թուրքական նոր հոսանքներուն մոտիկ ծանոթ դեմք մըն է, այս 4—5 տարի է տեղական ֆրանսական, երբեմն և հայ թերթերուն մեջ կ'աշխատակցի. կարող տղա՛ է, նոր ու հետաքրքիր նյութ կը հասցնե՛ծ ձեզի, և թերթին համար հատուկ էնտերվյուններ: Ծթե կուզեն թող հայտնեն ինձի իրենց առաջարկելիք պայմանները և ես հարաբերութեան մեջ դնեմ թերթն ու թղթակիցը. վստահ եմ որ գոհ կը մնան, և վերջապէս քանի մը թղթակցութեամբ կրնան փորձեր:

Կը հուսամ, որ այս նամակիս պատասխանն ալ շեռ հետաձգեր նորեն մինչև չեքավոր նամակ մը ղրկել կարողանալդ. չեքավոր նամակը, անշուշտ, շատ աղվոր սկզբունք է, բայց քիչիկ մը կարծեմ անհարմար, եթե այդ պատճառով ուղիղ կես տարի պետք է սպասիմ նամակներու պատասխանին:

Միրալիր բարեկերով ու համբույրներով  
Լևոն

5

1913, հոկտ[եմբեր] 2, Լոզան

Միրելի՛ Ստեփաննս, առաջին բարևս քեզի Լեմանի ափերեն. արդեն ամիս մըն է, որ հոս ենք, խառնակ օրեր, հյուրանոց ու պանսիոն. նո՛ր եղանք վերջապէս տուն ու տեղ ու քիչ մը գլխուս տերն եմ: Մեր ճամփորդութիւնը շատ արագ եղավ ու թեթև, հիմա երազի պէս կը հիշեմ միայն: Իսկ Լոզանը մեզի համար նորութիւն չէ, միայն շատ մեծցած գտանք, արագ կերպով կ'աճի քաղաքն ալ, բնակչութիւնն ալ, ատոր համեմատ ալ իհարկե՛ս և կյանքը: — Սուրենը դպրոց դրինք, արդեն դարձավ *écobier*, թեև հոստեղի դպրոցներն ալ բնա՛վ այն շեն, ինչ որ կը ցանկայինք որ ըլլան: Վիգենը այս տարի դեռ դպրոց չենք դնելու, Զավոն կ'ըզբաղվի հետը տանը: Հա՛, շուտով «Հասկեր» հասցուր անոնց, մենք ունինք միայն մինչև հունիս ամիսը, այսինքն 6 թիվ: Հիսա զբաղված են հավելվածներուդ ընթերցումովը: Գալով ինձի՛ դեռ գրական աշխատանքի մոտենալ չեմ կրնար. հիմա ամբողջովին Լուսաբերի Դ տարի-ովն եմ. առաջին տպագրական թերթերը արդեն արտագրած ղրկած եմ, հաջորդներն ալ ղրկելու վրա: Բովանդակութիւնը ըստ էութեան արևելյանին կը համապատասխանե. դուրս եմ նետած քանի մը շատ երկար ու անհարմար հոդվածները, ինչպէս «Քինաքինա», «Ղարա խանում», բաց եմ թողած, այսինքն ալ վելի ճիշտը՝ պահած եմ հաջորդ տարվան, քանի մը ոտանավորներ, որոնց փոխարենը նորեն գրել ըսել է, նորեն թարգմանել, ինչպէս օրինակ Պուշկինի «Ջրահեղձը»: Այլ և Խնկոյանի առակները, որոնք շատ երկրորդական արժեք ունին. ատոնց փոխարեն դրած եմ Քոնիովի առակներն Այվազովսկիի թարգմանութեամբ, իհարկե՛ս կոկած, այսինքն «սիրունցուցած»: Օհաննեսի ոճով: Իսկ մնացած հոդվածներն ալ աշխատել եմ սեղմեմ ու կրճատեմ ինչքան որ հնար է, որով հույս ունիմ Արևելյան նոր հրատարակութեան ատեն ալ աշխատանքս քանի մը պետք գա: — Ինչպէս գրած եմ գարնան կու գամ ձեզի թե՛ նախորդ տարիները անգամ մը սրբագրելու և թե՛ Ս ու Զ տարիները կազմելու: Աղեկ կ'ըլլա, որ Օհաննեսի հետ անգամ մը խորհրդակցեք, թե ինչ նախապատրաստական աշխատանք կարելի է կատարել մինչև գալս: Ես իմ կողմես, ինչպէս գրել եմ, կ'երթամ Վիեննա ամբողջ արևմտյան գրականութեան հանելու, ինչ-որ կրնա պետքը զար մեզի Ե և Զ տարիներու արևմտյան լրագրին համար: Նմանապէս, սիրելիս, շատ կարևորութիւն ունեցող խնդիր է, որ մենք մանրամասն կերպով հրապարակ դնենք մեր այբուբենը սորվեցնելու

եղանակը. մեր ճամբան, որ անպայման ամենն բնականն ու շիտակն է, ինչպես կը վկայեն բոլոր անձամբ գործադրողները, ատոնց թվին և էս, իբրև գործադրող. Սուրենն ու Վիգենը այնպես բնական կերպով բառերը կարդալ սորվեցան, ուրկե ավելին պահանջել կարելի չէ: Ետքը ի՞նչ եղավ արևելյան վարժություններու հարցը, թողի՞ր, անհրաժեշտ է մեր ընթերցարաններու մտողչությանը համար: Պոլիս նորեն գրեցի, որ զրկեն քեզի մինչև հիմա հրատարակած լուսարբերներն ու վարժությունները: Նոր ստացա Ա տարվան հրորդ հրատարակությունը, որ Պոլսեն մեկնելես առաջ ենթարկեր էի սրբազրուծյան, այլև ավելցուցեր եմ բառարան մը. կյանքը ստիպեց. ուսուցիչները իրե՛նք չըզդտեն այդ բառերուն իմաստը. այդ ճամփան ընտրեցի թե՛ ամեն կողմեն «չենք հասկընարի» տրտունջը մեջտեղեն վերցնելու և թե՛ մեր սկզբունքը առաջ քշելու համար: Երկու օրինակ կը զրկեմ այսօր քեզի նամակիս հետ:

Երկու հարյուր բուրլիի երկրորդ շեքը դեռ չեմ ստացած «Գիրեն»: Լևոնը նորեն Վիեննա՞ է՞<sup>36</sup>, հասցեն զրկե՛ մեզի: Իսկ Սրբուհի՞ն, նորե՞ն Մոսկվա՞<sup>37</sup>, թե՞ արդեն մորը հետ. տարիները այնպես կը թռչին, որ մարդ հաշիվը կը կորսնցընե: Կատարյալ հաջողություն տիկին Կատարինեի դպրոցին, ու սըրտագին բավականություն իրենն ու քեզի: Զերմ բարևներով կը համբուրեմ քեզի.

Լևոն

Հասցես՝ Montagibert, 6, Lausanne

6

1913, նոյեմբեր 24, Լոզան

Սիրելի՛ Ստեփանս,

Լոզան գալես մեկ-երկու շաբաթ ետքը քեզի նամակ մըն եմ գրած<sup>38</sup>. մինչև հիմա ոչ մեկ պատասխան չունիմ քեզմե. եթե միայն քու լուսթյունդ ըլլար՝ չէի կասկածեր, արդեն վարժըվեր եմ. բայց չեմ ստանար նաև «Հասկերը», որ արդեն քանի մը թիվ հրատարակված պետք է որ ըլլա. և ակամա կը մըտածիմ, որ նամակս ձեռքդ չէ հասած. երկար նամակ մըն ալ գրած եմ քեզի Պոլսեն մեկնելու օրերս<sup>39</sup> քու Ուրավելի հասցեովդ. կը հուսամ՝ գոնե ան ստացած ըլլաս, որուն մեջը 1912/13-ի հաշիվն եմ տրված. նամակը ապահովագրած է:

Եղբայր, ի՞նչ կ'ընես, ինչպե՞ս ես. եթե մեջեմեջ «Հորիզոնի» մեջ անուներդ չը պատահիմ, բոլորովին թելս պիտի կորսնցնեմ: Այնքան ժամանակ է քու մտածումներուդ, քու զգացումներուդ, քու զբաղումներուդ մասին ոչինչ չես գրած ինձի, որ ես ալ հիմա ակամա տեսակ մը կը քաշվիմ քեզի իմ մասին ու իմ հոգեկան աշխարհեն քեզի գրելու: Համենայն դեպս կը ցանկամ բոլոր սրտովս, որ մարմնապես առողջ ըլլաս ու հոգեպես լեցուն: Տիկին Կատարինեն անշուշտ ամբողջովին կլանված իր դպրոցով, և ինձի կը թըվի դո՛ւն ալ բավականաչափ: Հաջողությո՛ւն:

Ես շատոնց վերջացուցած եմ Լուսաբերի Դ տարին. տպված առաջին տպագրական թերթը ստացա Պոլսեն քանի մը շաբաթ առաջ, անկե ետքը լուր չունիմ. իմ հաշվովս արդեն պետք է ավարտած ըլլար ամբողջի տպագրությունը. այս օրերս լուրի կ'ըսպասեմ: 1912-ին տպած Ա ընթերցարանի երկրորդ տիպը (5000 օրինակ) այս սեպտեմբերին սպառեր էր բոլորովին և տպագրեցին երրորդ տիպը՝ 10000 օրինակ, երկու տարվա ընթացքին վճարելի. ասկե ամսվան մը շափ առաջ զրկած եմ քեզի երկու օրինակ այդ նոր տպագրութենեն: Վերջերս ալ գրած էին ինձի, որ սպառեր է այբբենարանը

(տպված էր 1912-ին, 13000 օրինակ, երկրորդ տիպ) և կը խնդրեին անմիջապես ձեռնարկեն երրորդ տպագրութեան 20000 օրինակի. իսկույն սրբագրեցի Ք տպագրութեան մեկ օրինակը և ղրկեցի իրենց տպագրելու, նորեն երկու տարիեն վճարելի. գրեր էին, որ Ք ընթերցարանն ալ անմիջապես տպագրելու պետքը կա, ինչպես և Ա տարի վարժութունները. բայց դեռ վերջնական լուր չունիմ: Ինչպես կը տեսնիս, այս տարի քիչ մը ավելի կենդանի է մեր շուկան, որը մասամբ վերագրելի է Տաճկաստանի հարաբերական խաղաղութեանը այս տարվան, մասամբ ալ անշուշտ մեր գրքի հետզհետե արմատ բռնելուն:

— Խնչ պետք է ընենք հիմա Ծ և Զ տարիներուն համար. ըստ երևույթին առաջին շորս տարիները դուք այս ամառ արդեն կարգի բերեր եք: Կը խնդրեմ, որ Օհանեսի հետ վերջնապես որոշեք՝ առաջիկա տարի այդ երկու գրքերը պե՞տք է կազմենք թե չէ, իմ Թիֆլիս գալս անհրաժեշտ է, թե գուցե հեռուեն ալ կարելի ըլլա աշխատիլ. և եթե գալս պետք է, ձեզի համար ո՞ր երկու ամիսն է ամենեն ավելի հարմարը, կարելիին շափ կեդրոնացած աշխատելու համար. ամառվան մի՛ ձգեք, շատ կ'ուշանանք և իմ կարծիքովս ավելի հարմար է Թիֆլիս աշխատիլը, քան որևէ ամառանոց:

Սիրելի՛ս, մինչև հիմա դեռ չեմ ստացեր 200 րուբլիի այն համրավավոր երկրորդ շեքը, թեև երկու անգամ գրած եմ «Գիրին»։ Կը խնդրեմ, ինքզ ստիպես, որ շուտով ղրկես: Այլ և կը խնդրեմ «Հին Աստվածներու» երկրորդ տիպեն, եթե ծախված կա, կ'ըր գումար մը միացնես այն 200 րուբլիին: Գալով ներկայացումներուն, գիտեմ որ անախորժ ախոյան մըն է ատիկա քեզի համար, բայց ուրիշ հնար չունիմ, Ստեփան, ու կը խնդրիմ որ հետևես ու տեր մնաս իմ իրավունքիս<sup>40</sup>, ինչպես մինչև հիմա:

Կը հուսամ, որ շուտով քանի մը տող կը գրես ինծի: Ես ու Զավոն սիրով ու կարոտով կը բարեկնք քեզի, տիկին Կատարինեին ու քու արդեն մեծ «պըզտիկներդ»: Գիտե՞ս, որ Արուսյակը (Փանոսյան) հոս է, համալսարանը կը հետևի քնագիտութեան և հաճախ մեզի է իհարկե. քույրը՝ Գոհարիկը, ամառը ամուսնացավ ու իր բժիշկ ամուսնու հետ Բերլին է հիմա. Արուսյակն ալ նշանված է, նշանածը Պոլիս՝ Գերմանիա ավարտած փիլիսոփայութեան տոքսոր մըն է, մեր ընկերներեն: Բարենք քեզի Արուսյակեն:

Զերմ համբուրներով՝ Լեոն

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ... քերմ շնորհակալությունս քու հետագրիդ, շնորհավորանքիդ ու հոգածությանդ փոխարեն.— «Հին աստվածների» առաջ քերած հանրային բուռն հետաքրքրության համար հետագրով շնորհավորելով ընկերոջը՝ Ստ. Լիսիցյանը միաժամանակ նրան խոստացել է շուտով ուղարկել մամուլում շարունակաբար տպվող նյութերի կտրածները (տե՛ս ծան. 20) և մտահոգվել ներկայացումներից հեղինակային հոնորարը կանոնավոր զանձելու հարցով (տե՛ս ծան. 4):

2 Լրագիրներեն իմացած էի, որ «Աստվածներս» իրենց վրա ուշադրություն են գրավեր Թիֆլիսի երկնքին տակ.— «Հին աստվածները» «մամուլի տակից» դուրս է եկել 1912-ի Բուլիսի 24-ին (Վկայված է նույն օրը Լիսիցյանին ուղղված անտիպ նամակում), քեմալի: ման նախօրեին (11 հունվար, 1913) քննարկվել է Թիֆլիսի գրական-գեղարվեստական սալոնում, առաջին անգամ քեմաղովել է 14 հունվարի 1913 թ., իսկ մամուլի արձագանքները սկսվել են մեկ օր անց՝ հունվարի 16-ից («Հորիզոն», «Մշակ» և այլն):

3 ... հետաքրքիր եմ գիտնալու ձեր համած վեճը.— «Հին աստվածների» գրական առաջին դատը կայացել է 8 փետրվար 1913 թ., Թիֆլիսում: Դատարանի նախագահ՝ Տ. Հովհաննիսյան, դատավորներ՝ Ա. Աթաբաթյան (զեկուցող) և Հ. Ամիրխանյան, երդվյալ ատենակալներ՝ Գ. քահ. Աղանյան, Բ. Աղասարյան, Կ. Բահաթյան, (Ե. Բահաթյուր), Գ. Բաշիջաղյան, Ա. Զարգարյան, Մ. Մանյան, Հովհ. Թումանյան, Լեո, Ա. Սատիսյան,

Ի. Հարությունյան, Ա. Քալանթար, Ա. Բիշմիշյան, մեղադրողներ՝ Ա. Հարությունյան, Մ. Մատենճյան, պաշտպաններ՝ Գ. Լիփեջյան, Ստ. Լիսիցյան (տե՛ս Բարկեմ Հարությունյան, ՃԻՄ—ՃԽ դարերի հայ թատրոնի տարեգրություն, հ. 3. Երևան, 1981, էջ 86—87): «Դատը» կոնկրետ վճիռ չի կայացրել:

4 Գալով ուզած լիազորությանը՝ գտնես պիտի ճամակիս կից.— Լիազորագիրը քերուս ենք ամբողջությամբ.

### ՀԱՎԱՏԱՐՄԱԹՈՒՂՎԹ

Այս թղթովս լիազոր իրավունք կու տամ ընկերոջս՝ Ստեփան Լիսիցյանին

Առաջին՝ թույլատրելու կամ արգելելու իմ բոլոր դրամաներուս ներկայացումը Ռուսաստանի բեմերուն վրա,

երկրորդ՝ պայման կապելու այն ընկերություններուն, դերասանական խմբերուն կամ մասնավորներուն հետ, որոնք իմ դրամաներես մեկը կամ մյուսը ներկայացնել կցանկան և երրորդ՝ ստանալու ամեն մեկ ներկայացումեն ինձի հասանելիք հեղինակի վարձը:

1918 փետրվար 10

Կ. Պոլիս

Լևոն Ծանթ

5 Իսկ ես անցնեմ մեր Լուսաբերին.— Խոսքը Ստ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և Լ. Ծանթի կազմած 1—5 դասարանների մայրենի լեզվի «Լուսաբեր» դասագրքի մասին է, որը արևմտահայ դպրոցների համար Լ. Ծանթը փոխադրել է արևմտահայերենին:

6 ... հակառակ բոլոր անպատեհություններուն՝ վաճառումը այնքան ալ գեշ չէ.— 3 փետրվար 1912-ի նամակում (անտիպ) Ծանթը գրում է. «Մեր գրքերու մասին մեկ թե երկու թեթև քննադատական բան դուրս եկավ. կիսսին միայն լեզվի մասին. կը մեղադրեն թե կովկասյան ձևեր կը մտցնենք. երկրորդ մեղադրանքն ալ այն է, որ գյուղը կը տիրե գրքին մեջ. հասպա քաղաքացի մանուկներն ինչ ընեն»: Մի այլ՝ 7 հոկտեմբեր 1912 թվակիր նամակում (նույնպես անտիպ) գրում է. «... ամեն կողմե կքննադատեն մեր լեզուն, չեն հավնեք. «Մեր լեզուն չէ, կրեսն, կովկասյան լեզվի թարգմանությունն է, կրեսն...»: Մեր՝ ժողովրդական մոտենալու ջանքը, մեր պարզության ու հասարակության ձգտումը անոնց համար օտար է ու խորթ. ատիկա իբրև կովկասցիություն կ'զգան, գոցե և իրավունք ունին»:

7 ... որչափ որ կ'ենթադրեն «Արծիվը».— Արևմտահայերեն «Լուսաբերի» տպագրությունն ու վաճառքն իրագործել է Կ. Պոլսի «Արծիվ» ժողովրդական գրավաճառանոցը.

8 ... գլխավոր դժվարությունը Հանեսին պոետներն են.— «Լուսաբերը» արևմտահայերենի փոխադրելիս Ծանթը լրջորեն մտահոգվել է Հովհ. Թումանյանի գործերով՝ ձգտելով ամեն կերպ հաղթահարել լեզվատոհմական դժվարությունները և պահել դրանց քարձր գեուարվեստականությունը: Այս մասին Ծանթը էլի է արտահայտվել:

9 Գալով ձեր ամառը հոս գալուե... — Լ. Ծանթն է ընկերներին հրավիրել Կ. Պոլիս: Իր 7 հոկտեմբեր 1912 թվակիր նամակում նա գրում է. «Հովհաննեսը, դուն և ես, իհարկե աղեն Լ, որ անգամ մը իրարու գանք նախ՝ արդեն մեջտեղ իջած գրքերը թե՛ ձևի և թե՛ նյութի, և թե՛ ուղեցույցի տեսակետեն անգամ մը աչքե անցնելու, լրացնելու ու սրբագրելու. երկրորդ ալ՝ հիճեերորդ ու վեցերորդ տարիներու կազմության մասին լրջորեն խորհելու, եթե ոչ անմիջապես կազմելու: Կարծես ամենեն հարմարը ձեր Պոլիս գալը պիտի ըլլա, կղզին հիանալի է, դուն ալ գոհ կ'մնաս, Հովհաննեսն ալ. Հովհաննեսի համար անգամ մը հոս գալը քացարձակ անհրաժեշտ է, թող տեսնե մեր աշխարհն ալ ու իր պայմանները»:

10 ... լուրջ ու աշխատող տղա մը՝ Սարգիս Սրենց.— Մեզ չհաջողվեց Սարգիս Սրենցի անձի վերաբերյալ տեղեկություն գտնել:

11 ... որոնք մինչև այժմ անագիրներու մեջ են միայն տպված («Եսի մարդը», «Քրիչի համար» և «Մամբուն վրա»...).— Այս դրամաներից առաջինը առանձին գրքով չի տպագրվել, երկրորդը տպագրվել է 1914-ին, Թիֆլիսում, երկրորդը՝ նույն թվականին, Կ. Պոլսում:

12 Նույնպես և վերջին վիպակս՝ «Կիճը», որ անցած տարի տպվեց հոս Ազատամարտի հավելվածին մեջը.— «Նոր հոսանքի» խմբագիր-հրատարակիչները (Ն. Աղբալյան և Ա. Լազարյան) ամսագրի անդրանիկ համարն սկսել են «Կիճը» վիպակով՝ տողատակում դրելով հետևյալ ծանոթագրությունը. «Ծանթի այս գրվածքը անցյալ տարի լույս տեսավ Պոլսի «Բազին» շաբաթաթերթում («Բազին» Ազատամարտի գրական հավելվածի անվանումն է— Ն. Վ.): Նկատելով այն մեծ հետաքրքրությունը, որ վերջերս առաջ եկավ ուսահայ հասարակության մեջ դեպի Ծանթի ստեղծագործությունը, նկատելով, որ Ծանթի այս գրվածն է միայն, որ անձնանթ է մնացած առասուհայ ընթերցողներին, ինչպես նաև գրվածքի գեղարվեստական արժանիքը, մենք տալիս ենք «Կիճը» մի քանի ուղղումներով,

որ արել է հեղինակը «Նոր Հոսանքին» ուղարկելիս: Վիսպակի շարունակությունը տպվել է ամսագրի հաջորդ համարում (դարձյալ նյութերից առաջինն է) և վերջում (էջ 264) ունի «1908, ամսա, Լոզան» նշումը, մինչդեռ գրողի երկերի բնյութային հրատարակության մեջ, տիտղոսաբերթին կա՝ «Գրված է Պոլիս 1912 թվին» նշումը: Վիսպակն առանձին գրքով լույս է տեսել Ռուս՝ 1913-ին, «Նոր Հոսանքի գրադարան» մասնաճաշարով:

18 ... դրկեմ նաև «Հին աստվածները» երախտագիտությանն հետ.— Վարշավայում սենյակի առևտրով զբաղվող Ջոհրաբյանը և Ղամբարյանը Ծանթի ուսանողական կյանքում վճռական դեր են խաղացել, որոնց նկատմամբ երախտագիտությունը մշտապես ապրել է գրողի մեջ: «... պարոն Ջոհրաբյանին խնդրած էի ավելորդ եռամսյակ մը, որը ուղարկեց իր սովորական կատարյալ պարզությամբը, որու փոխարեն ինքս ալ չգիտեմ, ճշմարիտ, ինչպես շնորհակալ լինեմ այդ մարդուն»,— գրում է Ծանթը իր 29 մայիս 1899 թվակիր նամակում: Մի այլ՝ 29 հուլիս 1899 թվակիր նամակում նա գրում է. «Վարշավայեն ոչ միայն ինձի խոստացվածը, այլև ավելի ստացած են»: Իսկ ավելի ուշ գրած մի նամակում կարդում ենք. «Իհարկե տեսա և՛ Ջոհրաբյանին և՛ Ղամբարյանին, երկուքն ալ վրաս լավ տպավորություն ըրին. չգիտեմ ի՞նչ ըսեմ քեզի, որ իմ գործն այդ մարդոց հետ կապեցիր. Ջոհրաբյանը... ընդհանրապես վրաս շատ գրավիչ տպավորություն ըրավ: Ստակի խնդիրը կարգադրեց այնպես, ինչպես իրեն գրած էիր...»:

Գրական հաջողության տաք օրերին խորապես տպավորիչ է հնչում Ծանթի պատասխանությունը...

14 ... Հասկերեն հանես և հատոր մը շինես Սատայանի պատմվածքներն.— Սատայանը Ստ. Լիսիցյանի կեղծանունն է:

15 ... թե ինչ լուրջ գործ ես տեսեր դուն քու «Հասկերովդ».— Ստ. Լիսիցյանի խմբագրած «Հասկեր» մանկական պատկերագրող ամսագիրը լույս է տեսել 1907—1922 թթ.:

16 ... դրած էի նաև դրամաներու լիազորության թուղթը.— Տե՛ս ծան. 4:

17 ... հարյուր ռուբլին նորեն հասցնես Ֆիլիպ Վարդապարյանին.— Փիլիպոս (Ֆիլիպ) Վարդապարյան (1858—1935)— Հ. Թումանյանի մտերիմ ընկերն ու բարեկամը, որ բարեկամական հարաբերությունների մեջ է եղել և Ծանթի հետ:

18 ... ինքը անձամբ հանձնես իշխանուհի Մ. Թումանյանին.— Թումանյան Մարիամ (1870—1946)— գրական-հասարակական գործիչ: Եղել է Հովհ. Թումանյանի տաղանդի սմեմաջերմ երկրպագուն: Բարեկամական վերաբերմունք է ունեցել և Լ. Ծանթի նկատմամբ:

19 Քու գեամատությունդ, քու համակրանքդ, քու այդ տաք վերաբերմունքդ.— Լինելով Ծանթի մտերիմ ընկերն ու բարեկամը՝ Լիսիցյանը գործում մասնակցություն է ունեցել նաև «Հին աստվածների» թիֆլիսյան «դատավարություններին»: Առաջին «Գրական դատի» մեջ նա ստանձնել է «դատապաշտպանի» դերը և ընկերոջը կրթոտ ու անվերապահ պաշտպանել «դատախազներ» Ա. Հարությունյանի և Մ. Մատենյանի մեղադրանքներից: Ականատեսի իր տպավորությունների մեջ Վ. Վաղարշյանը Լիսիցյանի խոսքը համարում է «միտինգային բնույթի» (տե՛ս Վ. Վաղարշյան, «Ընկերներս, բարեկամներս և ես», Երևան, 1959, էջ 179):

20 ... քու դրկած կտրուկներդ առատությանն ու բազմադիմությանը հակառակ.— Մոտ երկու ամիս առաջ է Լիսիցյանն ընկերոջը խոստացել մամուլի «կրտրուկներ» (տե՛ս ծան. 1):

21 ... դեռ ստիպված եմ սպասելու իմ քննադատիս.— Այս արտահայտությունը որոշ իմաստով հասցեագրված է: Ընդհանուր աղմուկի մեջ արժանավոր քիչ բան նկատելով՝ Ծանթը, բնականաբար, իր լուրջ սպասելիքները առաջին հերթին պիտի կապեր Ն. Աղբալյանի հետ, որի բարձր ճաշակն ու հմտությունը գիտեր ոչ միայն քննադատական գործունեությունից, այլև «Վերնատան» մտերմիկ շրջանից ու անձնական շփումներից:

22 Ծառ կցավիմ եղած քյուրիմացություններուն համար.— Տե՛ս ներկայումս հրատարակվող՝ 23 փետրվար 1913 թվակիր նամակում, ինչպես նաև՝ ծան. 4:

23 «Մեր իրականության մեջ սովորական եղող ավազակային հակումներուն» մասին...— Խոսքը հեղինակային իրավունքների դեմ ոտնձգություններին է վերաբերում:

24 ... դրամաս ծախեմ Տիգրան Բեզգադյանին... — Տիգրան Բեզգադյանը և նրա կին Հեղինե Մելիք-Հալկազյանը եղել են Հովհ. Թումանյանի և Ծանթի տաղանդի երկրպագուներ ու մտերիմներ: Դրաման «ֆիլիսոփ» ծախելու խորհուրդը տրվել է հեղինակային իրավունքների ոտնահարումը կանխելու նպատակով:

25 ... այս տողերս ցույց տուր Ավետյանին.— Խոսքը «Գիր» գրավաճառանոցի տնօրենի մասին է:

26 ... եղավ նույնը, ինչ որ եղեր էր լիազորության հարցի ժամանակ.— Տե՛ս ծան. 4, 22:

27 Միայն այս անգամ առաջնությունն Արթուրյանին է.— Տե՛ս ծան. 31:

28 .. երևի շուտով Բագու սկսվի նոր հրատարակությունը.— Տե՛ս ծան. 31:

29 ... գուցե նաև հոս.— «Հին աստվածները» 4. Պոլսում չի վերահրատարակվել:

80 ... մեր կղզին աղվոր է.— Տե՛ս ծան. 9:

81 «Հին աստվածները» որոշեր եք Թիֆլիս տպեր.— Ի պատասխան Լիսիցյանի առաջարկի՝ «Հին աստվածները» Թիֆլիսում վերահրատարակելու, իր 26 մարտ 1913 թվակիր համակույմ Ծանթը, չառարկելով ընկերոջը, հայտնում է սակայն, որ օրեր առաջ արդեն համաձայնություն է տվել Աբրահամին (Ջավոյի եղբորը)՝ վերահրատարակումը հաջվում կատարելու: Կողմերի փոխադրված համաձայնություննից հետո Աբրահամը Լիսիցյանին է ուղարկել ժամանակին իրեն հասցեագրված նամակի այն մասը, ուր գրողը շարադրել է «Հին աստվածները» վերահրատարակելու կապակցությամբ իր նկատառումները:

Տալիս ենք այդ նամակից տողեր, որոնք բնութագրում են Լ. Ծանթի տպագրական ճաշակը. «... հրատարակության դիրքն ու ձևը և երեսներու մեծությունը կարծես գեշ չըլլար, որ պահես եղածը (Խոսքը առաջին հրատարակության՝ 1912, 4. Պոլիս, մասին է— Խ. Վ.). Կը խնդրեմ, որ շողոճես մեջը ավելորդ նկարներ, անթետներ, վիճիտներ մտցնեն. ինչքան պարզ՝ այնքան աղեկ. ամեն տեսարանն ետքը պարզ ու ոչ-շապլոն վիճիտ մը. մնացածը ավելորդ է: Զանազան տեսակի գրերուս գործածությունը անպատճառ հարգել տուն,՝ ճիշտ այնպես, ինչպես որ առաջին տպագրության մեջն է: ... ես կը նախընտրեմ հաս: ու թեթև մաթ թուղթ, որ Պոլիս զգտա...:

... Գրքին ետևը, սկիզբը, շապիկին վրա՝ կազմարարը, տպարանատերը, գրավաճառը շատ կսիրեն հայտարարություններ ու ռեկլամներ սպրտեցնեն, կամ գոնե անուցնին— ոչ մեկ ավելորդ բառ չես թողներ...: Եվ ետևը չես դներ ոչ մեկ վրիպակ, ինչքան ալ որ սխալներ մեջը աչքե փսխած ըլլան. տգեղ է ու անօգուտ: ... Եվ տպել կու տաս այն օրինակին, որ այս նամակիս հետ միասին կը ձգեմ պոստը ապահովագրած. մանր-մուր բավական սրբագրություններ կան մեջը. էական ոչ մեկ փոփոխություն չեմ մտցուցած, եթե կրեկիցե որևէ բան փոխելու ալ ըլլամ, համեմայն դեպս հիմա շատ է կանուխ ու դեռ ժամանակը չէ:

1913, մարտ 4

Պրինկիպո Լևոն

82 ... թերթերեն հանված նոր կտրոններ.— Տե՛ս ծան. 1, 20:

83 ... Յարագի մեջ հողված մը կա եղեր տիկին Խանազատի կողմն.— Հողվածը տըլպել է «Տարագի» 1913, թիվ 3-ում:

84 ... Նիկոլ Աղբալյանին ըսես, որ ինձի «Նոր հոսանքը» դրկե.— Գրական, գիտական, հասարակական և քաղաքական «Նոր հոսանք» ամսագիրը հրատարակվել է 1913—1915 թթ.: Խմբագիր-հրատարակիչներ Արշակ Ղազարյան և Նիկոլ Աղբալյան: Ամսագրի ստաջին համարում արտաստպվել է ոչ միայն Ծանթի «Կինը» վիպակը (տե՛ս ծան. 12), այլև տեղ է գտել Ն. Աղբալյանի «Երագ և մեկուսացում» ուսումնասիրության առաջին կեսը (էջ, էջ 167—180) նվիրված «Հին աստվածներին»:

85 Խոսքը Տիգրան Ջավենի մասին է.— Ջավեն Տիգրան (1874—1938)— խմբագիր, մշակույթի ու հասարակական գործիչ: 1938-ին արտասահմանից հայրենադարձվել և զոհ է զնացել 1937-ի սպանդին:

86 Լևոնը նորեն վիճնա՞ է.— Խոսքը Լիսիցյանի որդու մասին է, որ այդ տարիներին բուսանել է Եվրոպայում:

87 Խակ Սրբոմի՞ն, նորե՞ն Մոսկվա.— Սրբոմի Լիսիցյան (1898—1979)— ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ: Ստ. Լիսիցյանի դուստրը:

88 Լոզան գալես մեկ-երկու շաբաթ ետքը քեզի նամակ մըն եմ դրկած.— «Առաջին բարև Լեմանի ափերեն» Ծանթը ընկերոջը ուղարկել է հոկտեմբերի 2-ին: Հետևաբար գրողի ընտանիքը Լոզան է հասել 1913-ի սեպտեմբերի կեսերին:

89 ... երկար նամակ մըն ալ գրած եմ քեզի Պոլսեն մեկնելու օրերս.— Նամակը հավանաբար չի պահպանվել:

40 ... կը խնդրեմ, որ հետևես ու տեր մնաս իմ իրավունքիս.— Խոսքը դարձյալ վերաբերում է «Հին աստվածների» բեմադրություններից հեղինակային հոնորարները սնորհներուն: Տե՛ս նաև ծան. 1, 4, 18, 23, 24.

**Х. Г. ВАРТАНЯН — Письма Левона Шанта Степану Лисициану.** — Публикуемые письма написаны в 1913—в эзездный в творческой жизни Шанта год. Достигший широкого признания и популярности писатель рассуждает в этой связи, дает оценки, которые могут помочь характеристике его эстетических воззрений. Письма содержат также разнообразный и важный фактический материал.